

100 Հարց Ս.

Հաղորդութեան Մասին
Հարցեր Եւ Պատասխաններ
24) Ի՞նչ այլ վկայութիւններ ու-
նինք այս մասին եկեղեցոյ
հայրերէն եւ հայ մատենագրու-
թեան մէջ:

Ե) Գրիգոր վրդ. Սկեւրացին կ'ըսէ. «Ճշմարտապէս կը հաւա-
տանք եւ կը քարոզենք, որ աստ-
ւածային սեղանին վրայ քահանայի
ձեռքով մատուցուած սուրբ հացն
ու բաժակը Քրիստոսի մարմինն ու
արիւնը կը դառնան: Եւ աս յայտնի
է, քանզի նոյն ինքը Տէրը ըսաւ, որ
հացը իր մարմինն է եւ գինին իր
Արիւնը, եւ քանի որ Քրիստոսի
Մարմինն ու Արիւնն են, ինք Աստ-
ւած է ճշմարտապէս: Ինչպէս որ Ս.
Հոգին իջաւ Ս. Կոյս Մարիամի մէջ
եւ մաքրեց գինը, ապա բանն
Աստուած իջաւ Ս. Կոյսի մէջ եւ
վերցուց անոր մարմինը եւ իրեն
միաւորեց, աստուածացուց, այն-
պէս ալ Ս. Հոգին, իջնելով այս
հացի եւ գինիի վրայ կը մաքրէ»:

25) Ո՞ր պահուն հացը եւ գինին
կը դառնան Քրիստոսի իրական
Մարմինն ու Արիւնը:

Ըստ հայոց եկեղեցւոյ վարդա-
պետութեան՝ Ս. Պատարագի ժա-
մանակ, եթէ զպրաց զասը կ'երգեն
«Որդի Աստուծոյ, որ պատարագ-
եալ հօր ի հաշտութիւն հաց կենաց
բաշխիւ ի մեզ. ...

Շարունակելի

Հոգեւոր պայքարը մեզ
արթուն կը պահէ

Հաւատացեալ մարդուն կեանքը
պայքարի կեանք է: Վերցուցէք
բոլոր տեսակի պայքարներն ու
փորձութիւնները հաւատացեալին
կեանքէն, եւ պիտի տեսնէք թէ
անոր հաւատքի ու աղօթքի
կեանքը պիտի թունայ: Հոգեւոր
պայքարներն են, որ մեզ մշտար-
թուն եւ ճակատի վրայ կը պահեն:
Երբ ամէն կողմէ հանգիստ ենք,
կրնանք թմրիլ եւ քնանալ: Բայց
երբ հոգեւոր պատերազմի մէջ
ենք, մեզմէ ոեւէ մէկը քնանալու
մասին չի մտածեր: Մեզմէ ո՞վ
առիւծներով, օձերով եւ կարիճ-
ներով լեցուն անապատէ մը
կ'անցնի առանց զգուշութեան եւ
կատարեալ արթնութեան: Ներկայ
աշխարհն ալ անապատ մը չէ՞:
Աշխարհի անապատին առիւծը
Սատանան է, որ մէկը կը փնտռէ
որպէսզի կլլէ (Ա.Պտ 5.8), իսկ
անոր պիղծ դելերը՝ կարիճներ ու
օձեր են, որոնցմէ անհունօրէն
պէտք է զգուշանալ, որովհետեւ
անոնք իրենց մահացու թոյնը
թաքցուցած են:

Միեւնի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ա-
մէն Կիրակի կը բաժնուի մեր ժողո-
վորդին, եկեղեցիներու բանկային
մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտ-
ռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա
սեղմել «Like»ը, կարդալու կամ
անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300— [facebook-ի էջ jerak ճրագ թերթ](#)



ՃՐԱԳ

ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ս. 119-105)

Թ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016

ԹԻԻ 50

Գ. Յիսնակի

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 37.14-38 Բ. ԹՍ.4.1-12

Յիսուս Քրիստոսի Աւետարանէն ըստ Դուկասի 14.12-24

կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, որպէսզի չըլլայ որ անոնք ալ քու
հրաւերիդ փոխարէն քեզ հրաւիրեն, եւ այս ձեռով քեզի հատուցում կատարած
ըլլան: Ընդհակառակը, երբ ընդունելութիւն կը սարքես, կանչէ՛ աղքատներն ու
խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս,
որովհետեւ անոնք քեզի փոխարէնը՝ հատուցանելիք ոչինչ ունին: Եւ գիտցած
եղի՛ր, որ քու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ»:

Երբ սեղանակիցներէն մէկը այս խօսքերը լսեց, Յիսուսի ըսաւ. «Երանի՛
անոր՝ որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ»:

Յիսուս անոնց հետեւեալ առակը պատմեց. Մարդ մը կար, որ մեծ ընթրիք մը
սարքեց եւ շատեր հրաւիրեց: Ընթրիքի ժամուն, իր ծառան դրկեց, որպէսզի
հրաւիրեալներուն ըսէ. «Եկէ՛ք, ամէն ինչ պատրաստ է»: Հրաւիրեալները սկսան
մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. «Ագարակ գնեցի. պէտք է երթամ եւ
տեսնեմ զայն. հետեւաբար կը խնդրեմ՝ որ ներողամիտ գտնուի»: Միւսը ըսաւ.
«Հինգ գոյգ եզ գնեցի. պէտք է երթամ փորձեմ զանոնք. հետեւաբար կը խնդրեմ՝
որ ներողամիտ գտնուի»: Ուրիշ մը ըսաւ. «Տակաւին նոր ամուսնացայ.
հետեւաբար չեմ կրնար գալ»: Ծառան վերադարձաւ եւ իր տիրոջ պատմեց անոնց
ըսածները: Այն ատեն, տանտէրը վրդոված՝ ծառային ըսաւ. «Անմիջապէս քաղաք
գնա՛ եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ որքա՛ն որ աղքատ, խեղանդամ,
կաղ եւ կոյր տեսնես, բոլորն ալ հոս բեր»: Քիչ ետք, ծառան վերադառնալով իր
տիրոջ՝ ըսաւ. «Տէ՛ր, հրամանդ կատարեցի, բայց տակաւին տեղ կայ»: Տէրը
ծառային հրամայեց. «Քաղաքէն դուրս գնա՛ եւ ճամբաներուն վրայ ու դաշտերուն
մէջ որո՛ւ որ գտնես, ստիպէ՛ որ գայ, որպէսզի տունս լեցուի: Կ'ըսեմ ձեզի, որ
առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը ինծի հետ ընթրիքի պիտի նստի»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Նիւոայ Արքեպիսկոպոս՝ որ Լիկիոյ փառաբան էր, Զմիւռնիոյ մօտ: Որդին էր Եպիփան եւ Նունէ անուն բարեպաշտ ծնողաց: Իր հրաշագործութիւններով ուշադրութիւն գրաւեց մանուկ հասակէն: Եպիսկոպոս ձեռնադրուած է իրեն համանուն եպիսկոպոսէն՝ որ իր քնոյն էր: Մասնակցած կը համարուի Նիկիոյ ժողովին: Մանուկներու մասին տարած հոգածու սիրոյն համար, նկատուած է մանուկներու պաշտպան. «Սանթափօզա» կոչումը ունեւորէն եւ մանկաբար խեղածելուած կերպն է՝ իր անունին: Ան ծանօթ է իբրեւ ազատարար՝ նաւակոծելոց եւ կոչուած է Սփանջելագործ: Բարի մահով վախճանած է Դ. դարուն: Քանի մը դար ետք, իր նշխարները փոխադրուած են Իտալիոյ Պաոլի փառաբան, ուր կայ մեծ տաճար մը՝ իր անուան նուիրուած:

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆԸ

Ողորմէ՛, Տէ՛ր, մեր եղբայրներուն, ծնողներուն ու իմ արիւնակից մերձաւորներուս, կրօնաւորներուն ու միանձն ճգնաւորներուն. անոնց, որոնք մեզի ողորմութիւն պարգեւեցին եւ անոնք, որ յանձնարարեցին զիրենք յիշել մեր աղօթքներուն մէջ. ողորմէ՛, Բարերա՛ր, եւ տո՛ւր իւրաքանչիւրին կարիքին համաձայն: Առատապէս բաշխէ՛ Սուրբ Հոգիիդ շնորհքները բոլոր անոնց եւ զարդարէ՛ ու միացո՛ւր Զու Աստուածութեանդ սիրոյն մէջ: (Եփրեմ Ասորի)

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Կիրակի օրը եկեղեցի երթա՞մ, թէ՞ տունս՝ իմ սենեակս աղօթեմ. այդ մէկը բաւարար է ինձի համար

Վարդան Վարդապետ Այգեկցի կ'ըսէ. Քրիստոս աղօթողին այսպէս հրահանգեց. «Բու սենեակդ մտի՛ր եւ փակէ՛ քու դռներդ, եւ գաղտուկ աղօթք՝ ըրէ՛ քու Հօրդ» (*Մատթէոս 6.6*): Այստեղ մարմինը եւ սիրտը սենեակ կը կոչէ եւ կը պատուիրէ մարմնական ամէն խորհուրդ՝ աղօթքի ժամանակ մտքէն հեռացնել:

Քրիստոնեայ ժողովուրդէն մէկը, երբ լսէ եկեղեցւոյ զանգին ձայնը՝ գիշեր թէ ցերեկ ատեն, մանաւանդ Կիրակի օրը, որ տէրունական օր է, եւ եկեղեցւոյ՝ երկինքի արքայութեան դուռը չ'երթար, փախանալ չի տեսներ, ու չի լսեր Աստուծոյ պատուիրաններուն հրամանը՝ պիտի չտեսնէ փառաց Տէրը բազմած՝ փառակերպ կենդանիներուն վրայ: Ուստի, ան որ Կիրակի օրը չի տեսներ եկեղեցականը եւ չի խոստովանիր իր յանցանքները, Աստուծոյ փրկութիւնը պիտի չունենայ:

Վարդան Վրդ. Այգեկցի

ԱՌԱՎ

Խրատ առէ՛ք եւ ոչ թէ արծաթ, գիտութիւն՝ քան թէ ընտիր ոսկի: Իմաստութիւնը աւելի կ'արժէ քան գոհարեղենները եւ ոչ մէկ թանկարժէք քան կրնայ հաւասարիլ անոր:

Ես՝ իմաստութիւնս, բնակեցայ խոհեմութեան մէջ եւ իւրացուցի մտածողութիւնն ու գիտութիւնը:

Աստուածավախ մարդը կ'ատէ անիրաւութիւնը, թշնամութիւնը, հպարտութիւնն ու չարագործութիւնը:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ
ԽՐԱՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ**

Սիրելիներ ձեր զաւակները Աստուծոյ երկիւղով կրթեցէ՛ք, որպէսզի Աստուծմէ վարձատրուիք, ինչպէս կը գրէ Պօղոս, թէ՛ «Կինը պիտի ապրի որդեանութեամբ» (Ա. Կոր. 2.15), այսինքն երբ իրենց զաւակները Աստուծոյ երկիւղով եւ հաւատքով մեծցնեն, Աստուծմէ կը վարձատրուին:

Հայրե՛ր, դուք եւս լսելով ասիկա, ձեր զաւակները Աստուծոյ համաձայն խրատեցէ՛ք. առաջին տարիներէն իսկ անոնց մէջ տնկեցէ՛ք բարին եւ անկէ ետք չէք յոգնիր, որովհետեւ այս սովորութիւնը օրէնք կը դառնայ: Մի՛ ներք երբ անոնք իրենց կամքին համաձայն կ'երթան, որովհետեւ ինչպէս իմաստութիւնը կ'ըսէ. «Մանկութիւնը եւ անմտութիւնը ունայնութիւն են» (Ժող. 11.10):

Զգո՛յշ եղէք, որ չարը ձեզմէ չյափշտակէ զայն: Սակայն դուք աւելի մտահոգ էք անոր հարստութեամբ քան պարկեշտութեամբ: Կ'ուզե՞ս զայն հարստացնել՝ սորվեցո՛ւր անոր Աստուծոյ երկիւղը: Եթէ ինչքեր չունենայ իսկ, ոչինչով պակաս կը գտնուի ուրիշներէ: Թէեւ չարաբարոյ զաւակներու պարագային աղքատութիւնը բարիքի պատճառ կ'ըլլայ, մինչ հարստութիւնը բազմատեսակ չարիքներու կ'առաջնորդէ:

Մայրե՛ր, խրատեցէ՛ք ձեր դուստրերը որ պարկեշտութեամբ սիրեն, մաքուր ու երկիւղած ըլլան եւ ո՛չ թէ պճնասէր կամ ուրիշին ունեցածին ցանկացող: **ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐ**

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

**ՄԱՐԴՈՑ ԶԱՐՈՒԹԻՒՆԸ
ՍԱՂՄՈՍ 14**

Անմիտ մարդիկ իրենց միտքին մէջ ըսին. «Աստուած չկայ», ուստի ապականեցան եւ զգուելի արարեցնելու մէջ ինկան, չկայ մէկը որ բարին գործէ: Տէ՛րը երկինքէն կը նայի մարդոց, տեսնելու համար թէ կա՞յ արդեօք իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ: Ամէնքն ալ խոտորեցան եւ մոլութեան գիրկը ինկան. չկայ մէկը որ բարին գործէ, չկայ մէկը, ո՛չ իսկ մէկը:

Երբեք խելի պիտի չգա՞նք բոլոր անոնք՝ որոնք չարիք կը գործեն. անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն, հացի պէս, եւ ՏԻՐՈՋԸ չեն աղօթեր: Բայց յանկարծակի՝ Տէ՛րը զիրենք ահ ու դողի պիտի մատնէ, որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է:

Զարագործները աղփատին խորհուրդները կը հեգնեն, բայց Տէ՛րը ի՛նքն է անոր ապաւենը: Ո՛հ տեսնէ՛ր՝ Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Սիոնէն պիտի գայ: Երբ Տէ՛րը ետ դարձնէ գերի տարուած իր ժողովուրդը, Յակոբի սերունդները պիտի ցնծան եւ ուրախանան:

ՈՐԵԻՔ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿՍԵԼԷ ԱՌԱՋ

Գրաբար

Իմաստութիւն Հօր, Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն՝ զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ: Ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛ր զիս: Եւ ողորմեա՛ քո արարածոցդ, եւ ինձ՝ բազմամեղիս: